Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ներքին Գետաշենի թիվ1միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Կերպարվեստ

Թեմա՝ Սոցիալ-հուզական, ճանաչողական և մետաճանաչողական ռազմավարությունների կիրառումը առարկայի դասավանդման մեջ

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցիչ՝ Նունե Հայրապետյան

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն——————————————————3

1. Մետաճանաչողական ռազմավարություններ——————5

2.Սոցիալ հուզական ռազմավարություն——————6

3.Ճանաչողական ռազմավարություն——————————7

4. Հետազոտական մաս ——————————————8

Եզրակացություն——————————————————13

Օգտագործված գրականություն——————————15

Ներածություն

Սոցիալ-հուզական, ճանաչողական և մետաճանաչողական ռազմավարությունների կիրառումը միշտ բոլոր ժամանակների համար արդիական թեմա է: Նկարելու երևույթը հաճույքի, ճանաչողության ու ինքնաարտահայտման բնական պատճառաբանված միջոց է: Սովորողը մարդ է՝ շատ ավելին զգացող, տեսնող և երևակայող, նրան պետք է շատ զգույշ ուղղորդել մտքերի <<աշխարհ>>: Յուրաքանչյուր մարդ ներքին պահանջ ունի լինել ավելի համարձակ , լինել ավելի բանիմաց, լինել ավելի շրջահայաց, միայն թե աշակերտները դրան ձգտում են ենթագիտակցաբար, մեծահասակները՝ ավելի գիտակցաբար: Այո՛, աշակերտի մտքի հետքից պետք է ուսուցիչը գնա աննկատ, զգույշ և սիրով, երեխան՝ պետք է ուսուցչին հավատա և վստահի, որպեսզի կարողանա հաղթահարել իր սոցիալ-հուզական խնդիրները: Սովորողի համար նկարելը հրաշալի միջոց է, որպեսզի նա սկսի մտածել և զգալ, մտածել անհնարին և հնարավոր ամեն միջողժ ավելի յուրօրինակ լինելու համար ու այստեղ նա կարող է հասկանալ, որ իր իրական ուժը՝ ստեղծագործողի, ստեղծողի մտքի ուժը: Նա սկսում է արժեվորել բնության և մարդու ստեղծածը, իսկ ուսուցչի համար մեծ ձեռքբերում է, երբ աշակերտը սա հասկանում է: Ահա այստեղ սկսվում է ուսուցչի աշխատանքը, այն, որը սկսվում ու երեվի չի վերջանում: Ի վերջո աշակերտին բացահայտելով ու <<հասկանալով>> ուսուցիչը ինքն էլ իրեն սկսում է բացահայտել, իսկ ավելի ճիշտ ուսուցիչը և աշակերտը բացահայտում են միմյանց: Դա, անշուշտ, բացառիկ հաջողություն է, բայց պետք է ձգտել դրան: Ձգտելով անհնարինին՝ կկարողանանք անել հնարինը:

Հետազոտության նպատակները

1. Սովորողը պետք է սովորի վերլուծել և մտածել ինքնուրույն
2. Սովորողը պետք է կարողանա հետևել իր մտքի և երևակայության ընթացքին

3. Խթանել սովորողի ճանաչողական գիտելիքները

4. Դաստիարակել համարձակություն՝ սեփական աչքերով աշխարհին նայելու կարողություն:

5. Զևավորել ինքնուրույն աշխատելու կարողություն

6. Կարողանալ պլանավորել սեփական գործողությունների ընթացքը

7. Զևավորել ինքնուրույն աշխատելու կարողություն

8. Կարողանալ պլանավորել սեփական գործողությունների ընթացքը

9. Ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

10. Արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման շրջանակներում

Հետազոտության խնդիրները

1. ՈՒսումնասիրել, թե որ ռազմավարություններն են ավելի արդյունավետ գործում սովորողի սոցիալ-հուզական խնդիրները հաղթահարելու համար

2. Բացահայտել սովորողի վերլուծական մտածողությունը

3. Սովորեցնել սովորողին մտածել իրենց մտածելու մասին

4. Կարողանալ ընդունել սեփական յուրահատկությունները

5. Սովորել սովորելու կարողությունը

6. Զարգացնել ինքնաճանաչողական կարողությունները

1.Մետաճանաչողական ռազմավարություններ

Մետաճանաչողական ռազմավարությունը հնարավորություն է տալիս սովորողներին ակտիվ դեր ունենալ ուսման գործընթացում, ղեկավարել և ուղղորդել իրենց սեփական ուսումնառությունը:

Սովորողների բնազդատական մտածողության հմտությունների զարգացումը հեշտացվում է մետաճանաչողության միջոցով:

Մետաճանաչողության ռազմավարություններ ուսուցանելու ձևերը

- Ռուբրիկներ, ստուգաթերթեր
- Ելքի քարտեր ՝ դասի ամփոփման
- Գործողության կատարման ցուցադրական մոդելավորում
- Հարցադրումներ <<Ինչպե՞ս իմացար , ինչպե՞ գտար պատասխանը>>
- Բարձրագույն մտածելը
- Վերլուծական անդրադարձ կատարելը

Մետաճանաչողությունը <<մտածելու մասին մտածելն է>>

Մետաճանաչողություն է կոչվում մարդու՝ սեփական ճանաչողական գործընթացներին հետևելու և կառավարելու ունակությունը: Երբ աշակերտը կարողանում է վերլուծական անդրադարձ անել հասկանալու համար, թե ինչպես է ինքը այս կամ այն բանը սովորում, ավելի լավ հիշում, հասկանում: Հետազոտությունները ապացուցում են, որ մետաճանաչողությունը զարգացնող ունակություն է:

2.Սոցիալ հուզական ռազմավարություն

Սուցիալ հուզական ռազմավարությունը հնարավորություն է տալիս սովորողներին նվազեցնել անհանգստությունը ուսումնառության ընթացքում, աշխատել ինքնամոտիվացված, ոգևորվել դասարանային տրամադրությունից և համագործակցության միջոցով հասնել ընդհանուր նպատակի:

Սուցիալ-հուզական ռազմավարություններ ուսուցանելու ձևերը

- Փոխանակել կարծիքներ
- Ճշտել փաստեր
- Հարցադրումներ կատարել
- Ինքնամոտիվացնող խոսակցություն վարել

Սոցիալ-հուզական ռազմավարությունը հնարավորություն է տալիս ուսուցչին, որպեսզի բարեհաջող ձևով կազմակերպի և իրականացնի ուսման պրոցեսը: Սովորողների կարծիքներ փոխանակելով և հանարավորություն տալով հայտնել կարծիք ու պնդել տեսակետներ, որոնք կարող են լինել շատ համարձակ կամ հակառակը՝ վախվորած: Զրույցի ընթացքում ճշտում են փաստերը և փոխանակում են կարծիքներ, այս դեպքում հնարավոր է ավելի կաշկանդված սովորողին ոգևորել, այսինքն նրա հայտնած կարծիքին <<նշանակություն>> է տրվում, քննարկվում է:

3.Ճանաչողական ռազմավարություն

Ճանաչողական ռազմավարությունը հնարավորություն է տալիս սովորողներին գտնել ընկալման ամենաարդյունավետ ոճը, գիտելիքը կիրառել տարբեր ձևերով, սովորել առանձնացնել նյութի կարևոր պատկերը, մեծ բովանդակություն ունեցող նյութերից գտել կարևոր միտքը:

Ճանաչողական ռազմավարություններ ուսուցանելու ձևերը

- Բանավոր կրկնություն
- Բազմառոճ հանձնարարություններ
- Նյութի գունազարդված ներկայացում
- Նյութի ներկայացման հիմնավորում
- Միջառարկայական և առարկայական կապի ստեղծում
- Խնդիրների լուծման նոր մեթոդների ներկայացում

4. Հետազոտական մաս

Մետաճանաչողական ռազմավարության կիրառման դասի օրինակ

Կիրառելով այս ռազմավարությունը 3-րդ դասարանցիների հետ ուսումնասիրեցինք, կարդացինք և այնուհետ նկարագարդեցինք Հ. Թումանյանի <<Զարի վերջը>> ստեղծագործությունը: Դասի սկզբին փոքրիկ զրույցով սովորողների միտքը <<հանգստացնում >> ենք և որոշ կրճատումներով պատմում եմ <<Զարի վերջը>>, այնուհետ 2-3 րոպե քննարկում ենք սովորողների հետ՝ ի՞նչ անիրավ է աղվեսը, ի՞նչ մեղք է կկուն և այլն: Այնուհետև առանց մեծ նշանակություն տալու հարցիս սովորողներին հարցնում եմ, իսկ եթե կկվի տեղը դուք լինեիք կամ մեկ այլ նմանատիպ հարց: Եվ հրաշքը սկսվում է: Աշակերտները մի պահ մտածում են՝ քար լռություն, իսկ մեկ րոպեից մտքերի տարափ, ոգևորություն և նկարելու, արտահայտվելու անզուսպ ցանկություն, ինչին և ձգտում էի: Աշակերտներից մեկը՝ Արթուրը, ով ավտոմեքենա շատ է սիրում և ավտոմեքենաների մասին գիտի <<ամեն բան>>, ծառի կողքին նկարում է մի հսկայական ավտոմեքենա, կկվի ձագերը մեքենայի վրա թառած. <<Ես ձագերին ավտոյով ուղարկում եմ հեռու և աղվեսի հետ տղամարդու նման կռվում եմ>>:

Արփինեն ասում է. <<Ես երկու բույն կսարքեմ, մեկում կթաքցնեմ ձագերին, մյուսում՝ քար կլցնեմ, որ տամ աղվեսի գլխին>>:

Մյուսը . << Եթե անգամ աղվեսը կացին ունի, միևնույն է, նրան շատերը չեն սիրում, ու ես կկանչեմ բոլորին, որ կռվենք նրա հետ>>:

Սովորողները նկարում են ամենատարբեր ձևերով, աստիճանաբար գալով բուն ստեղծագործությանը, մշակելով նորովի նկարում են որևէ ոչ ստանդարտ տեսարան, սակայն ավելի հղկված, մշակված թեմային ավելի հաճախ սովորողները անդրադառնում են հաջորդ դասին ևս:

Ժամանակակից մարդը ինքնուրույն մտածելու, հասկանալու մեծագույն խնդիր ունի: Պետք է մենք՝ ուսուցիչներս, կարողանանք սովորողին սովորեցնենք մտածել և անվերջ վերադառնալով նախորդ մտքին , նորից առաջ գնալ և այդպես անվերջ: Այստեղ կա մի հրաշալի բան. սովորողը գտնում է ինքն իրեն, իր ձեռագիրը, իր աշխարհը, նա հասկանում է, որ այստեղ կա անկեղծ և կեղծ: Ենթագիտակցաբար աշակերտը ավելի ու ավելի պահանջ է զգում անկեղծ երևույթների, իրավիճակների վերլուծությունների, նա սովորում է հարգել ուրիշի միտքը, եթե դա զգում է ավելի լավ, բան մեծահասակը: Մարդը ի սկզբանե պահանջ ունի լինել իր տեսակին, իր գենին մոտիկ, նա դա զգում է և ավելի հարմարավետ է այդպես , նա այդ միջավայրում ավելի մտածող է, զգացող և կհամարձակվեմ ասել նաև գեղեցիկ: Նկարչության մեջ տարիքային վերապահումները շատ քիչ են: Մետաճանաչողական դասը քիչ փոփոխություններով կարելի է պարապել 1-5-րդ դասարանցիների հետ և հավատացնում եմ՝ փոքրերը ավելի շուտ են ներգրավվում այս դասի մեջ:

Օրգանական կապ պետք է ստեղծել կյանքի և ստեղծագործական կյանքի միջև: Անպայման դիտել տալ պարզ կենցաղային երևույթի մեջ թողարկված գեղարվեստական հենքը: Թեմաների սյուժետային և կառուցվածքային միապաղաղությունը պետք է բացառել: Պետք է ստանդարտ մտածելակերպից դուրս գալ և տեսնել շատ ուղիներ, ելքեր և ընտրել այն ճանապարհը, որտեղ սովորողի միտքը տանում է իրեն, որն էլ այդ աշակերտի համար միակ ճիշտն է տվյալ պարագայում:

<u>Ճանաչողական ոգևորության կիրառման դասի օրինակ</u>

4-րդ դասարանում նկարում ենք աշնանային նատյուրմորտ և բանի որ սովորողները արդեն գիտեն ինչ է նատյուրմորտը, տիտեն գունային խառնուրդները, քիչ թե շատ կարողանում են ստանալ ծավալ և տարածություն, մենք նրանց հետ սկսում ենք վերլուծել մրգերի և բանջարեղենի ձևերը (ֆորմաները): Նատյուրմորտը կազմված է դդումից, խնձորից, սալորից, տանձից և կավե կուժից:

Երեխաներին բացատրում եմ թղթի մեջ ճիշտ տեղադրելու ձևը և անհրաժեշտությունը, այնուհետև սկսում ենք միասին հասկանալ և վերլուծել ինչու են մրգերի և բանջարեղենների զգալի մասը գնդաձև կամ ձվաձև և բնականաբար սովորողները, այդ թվում և ես, չեմ կարող հիմնավորել ինչու, բայց մենք միասին հասկանում ենք, որ Երկիր մոլորակը նույնպես գնդաձև է կամ ավելի ճիշտ՝ ձվաձև, ու պտուղները այս մայր հողի զավակներն են, հետևաբար նման են նրան: Երկիր մոլորակը, մայր հողը մեզ պարգևել է բերքով, որը աշխատանքի արդյունք է, հետևաբար այն սնվել է հողից, և հողը մշակող մարդու մեծագույն ցանկությունից:

Իսկ որն է մշակողի ցանկությունը: Կարծիքները տարբեր են . որ շատ բերք լինի, , որ թանկ ծախսեն, որ համով լինի, որ գեղեցիկ լինի, որ մայրիկը ուրախանա և այլն:

Ես փոքրիկ, անկատ ուղղումներով աշակերտներին տանում եմ նորից բնություն: Իսկ ինչ է ուզում մայր հողը: Դարձյալ հնչում են կարծիքներ, որ գեղեցիկ լինի,որ հյութեղ լինի, որ չմնա գետնին ընկած, որ իրենից՝ հողից, շնորհակալ լինենք և այլն: Վերջին միտքը հրաշալի է, որը քննարկվում է: Աշակերտները սկսում են մտածել, որ հողը, ծառը, երկինքը, անձրևը ցանկալի է ու շատ կարևոր են մեր կյանքի ու ապրելու համար: Այնուհետև ես աշակերտներին առաջարկում եմ մտովի շոշափել նատյուրմորտում գոյություն ունեցող առարկաները, որպեսզի փորձեն մտքում զգալ նրանց ձևերը, կարծրությունը, փափկությունը, համը, հոտը և այնուհետև նկարել: Որպեսզի ավելի հեշտ ստացվի նկարը, դրա համար նախ բոլոր մրգերը նկարում ենք որպես շրջան , այնուհետև շրջանը մշակելով դարձնում ենք խնձոր կամ սալոր կամ դդում, իսկ կուժը կառուցում ենք գրեթե մաթեմատիկական ճշտությամբ հետևյալ եղանակով՝



(Նկարը վերցված է https://jak.koshachek.com/articles/jak-namaljuvati-vazu-olivcem-poetapno-video.html էջից)

Եվս մեկ օգտակար հղում կուժի կառուցման վերաբերյալ՝ https://youtu.be/qXp4LK6Boao?t=1

Այս <<հետ>> եղանակից աշակերտները ոգևորվում են: Բնականաբար կուժին <<շունչ>> տալու համար մի փոքր անդրադարձ ենք կատարում : Ո՞վ է սարքել կուժը, ի՞նչ է ուզեցել անել, ի՞նչ, ինչպե՞ս և այլն: Եվ այստեղ գալիս ենք մի շատ կարևոր հանգուցալուծման՝ բնության ստեղծածը և մարդու ստեղծածը…

Քննարկել կարելի է շատ երկար, բայց այժմ կբավարարվենք նրանով, որ մարդու և բնության ստեղծածը արժանի է շնորհակալության և հարգանքի:

Սոցիալ-հուզական ոլորտի զարգացման դասի օրինակ

3-րդ դասարանում նկարում ենք <<Մայրիկի դիմանկարը>>: Դասի սկզբում աշակերտների հետ միասին քննարկում ենք մայրիկի հոգատարության, սիրո, բարության և այլնի մասին: Այս փուլում անցակնում ենք բանավեճ, քննարկում: Բանավեճ-քննարկման ժամանակ հատկապես ուշադրությունը կենտրոնացվում է այն աշակերտների վրա, որոնք ավելի անհամարձակ են: Դասարանում ստեղծվում է ոգևորող տրամադրություն և անցնում ենք դիմանկարին: Աշակերտներին ոգևորում եմ, որ նրանցից յուրաքանչյուրը իրավունք ունի նկարելու այնպես, ինչպես պատկերացնում է իր մայրիկին: Ավելի կաշկանդված և անհամարձակ աշակերտների նկարի վրա կատարում եմ փոքրիկ, բայց շատ համարձակ վրձնահարված կամ գիծ կամ ֆորմա, և այդ ամենը անում եմ թվացյալ անփութությամբ, որպեսզի աշակերտը տեսնի, որ կարող է և այդպես: Եվ աշակերտը համարձակություն է ձեռք բերում անելու այն ինչ մտածում է: Այո՛, աշակերտը պետք է համարձակություն ունենա անելու այն, ինչ զգում է, այնուհետ մշակելու, հղկելու և համատեղելուկարողությունների և գիտելիքների հետ: Առավելապես աշակերտները պետք է զգան, որ այստեղ նրանք չեն սխալվում կամ այդ <<սխալը>> անուղղելի չէ:

Եզրակացություն

Նկարելու երևույթը հաճույքի, ճանաչողության ու ինքնաարտահայտման բնականոն պատճառաբանված միջոց է: Սովորողը մարդ է՝ շատ ավելին զգացող, տեսնող և երևակայող, նրան պետք է զգուշորեն ուղղորդել, դեպի զգայական, ճանաչողական աշխարհ: Սովորողը այս առարկայի շրջանակներում պետք է կարողանա արժեվորել ազգային մշակույթի դերն աշխարհում, ինչպես նաև անհատի ձևավորման գործում: Ստեղծագործելիս աշակերտը հասկանում է, որ մարդու միտքը կարող է լինել շատ հզոր: Իսկ ե՞րբ է այն հզորանում, երբ որ մարդը սկսում է մտածել , վերլուծել, քննարկել:

Եթե սովորողը սովորում է լսելուրիշի կարծիքը, արտահայտել իր կարծիքը և քննարկել ու գտնել <<ճիշտ>> պատասխանը, ապա կարելի է ասել, որ գրանցում ենք հաջողություն: Աշակերտը անհատ է, և ուսուցիչը պետք է տեսնի այդ անհատականությունը ու կարողանա աշխատել այդ անհատի հետ: Մետաճանաչողական, ճանաչողական և սոցիալ-հուզական ռազմավարությունների կիրառումը հնարավորություն է տալիս ուսուցչին ավելի արդյունավետ աշխատել: 21-րդ դարում ուսուցիչը պետք է կարողանա աշակերտներին սովորեցնել սովորելու կարողությունը և ոչ թե ուղղակի գիտելիք փոխանցի:

Մարդու համար կարևոր է նաև ինքնաճանաչողական կարողության ձեռքբերում և վերջապես սոցիալ-հուզական խնդիր ունեցողների համար շատ կարևոր է ձեռք բերել գիտելիքներ, կարողություններ ստեղծագործելու ՝ տվյալ դեպքում նկարելու համար:

Թերևս ուսուցչի ճիշտ մոտեցման դեպքում, համապատասխան արդյունավետ մեթոդների կիրառման արդյունքում, կարող ենք սովորողների մոտ գրանցել հաջողություններ: Շատ կարևոր է, որպեսզի դպրոց սովորող ևավարտող մարդը լինի բազմակողմանի զարգացած, կարողանա

վերլուծական անդրադարձ կատարել, կարողանա այլ մարդկանց, սովորողների հետ գիտելիք ստանա և վերջապես կարողանա հետևողականորեն ձգտել և ստանալ գիտելիքներ:

Օգտագործված գրականություն

1.https://jak.koshachek.com/articles/jak-namaljuvati-vazu-olivcem-poetapno-video.html

2. https://youtu.be/qXp4LK6Boao?t=1

3.Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի 2021